ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1960 Общественные науки

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 40-ԱՄՅԱԿԻՆ

Գ. Ռ. Ղարիբջանյան

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Մեր երկրի բոլոր ժողովուրդները, ամբողջ աշխարհի պրոգրեսիվ մարդկությունը անհուն սիրով ու խանդավառությամբ նշեցին Սովետական Միության Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության հիմնադիր ու ղեկավար Վլադիմիր Իլյիչ Լենինի ծննդյան 90-րդ տարեդարձը: Վ. Ի. Լենինի անունը անսահմանորեն թանկ է բոլոր ժողովուրդների համար: Նրա ուսմունքը և գործը հզոր լուսարձակի նման լուսավորում են հարյուր միլիոնավոր մարդկանց ուղին դեպի կոմունիզմ:

Մեծ են Վ. Ի. Լենինի ծառայությունները նաև անդրկովկասյան բազմադարյան ժողովուրդների ազատության և անկախության, նրանց ռևոլյուցիոն ազատագրական պայքարի կազմակերպման, Ադրբեջանում, Վրաստանում և Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի ու ամրապնդման գործում:

Վ. Ի. Լենինը իր ռևոլյուցիոն գործունեության հենց սկզբից զարգացնելով մարքսիզմը, նշեց ինչպես բոլոր ճնշված ու շահագործվող ժողովուրդների, այնպես էլ ադրբեջանցի, վրացի և հայ աշխատավորության ազատության ճիշտ ուղին, գլխավորեց այդ պայքարը և հասցրեց այն կատարյալ հաղթանակի:

Այս հոդվածի նպատակն է հրապարակված և արխիվային կոնկրետ փաստական նյութերի հիման վրա ցույց տալ Վ. Ի. Լենինի վիթխարի դերը Անդրկովկասում Սովետական իշխանության ամրապնդման գործում 1920—1922 թվականներին:

* * *

Կազմակերպելով ու գլխավորելով Անդրկովկասում Սովետական իշխանության հաղթանակը, Վ. Ի. Լենինը հոգ էր տանում Սովետական Անդրկովկասի ամրապնդման ու զարգացման մասին:

Բուրժուական նացիոնալիստների և օտարերկրյա իմպերիալիստների տիրապետության տարիներին Ադրբեջանը, Վրաստանն ու Հայաստանը ծայրահեղ քայքայման էին հասել: Անվերջ պատերազմներից ավերվել էր ժողովրդական տնտեսությունը: Զաֆից դուրս կրճատվել էր արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքը: Զգացվում էր փորձված աշխատողների մեծ կարիք: Ժողովրդի կամքով տապալված մուսավաթականները, մենշևիկները և դաշնակները իրենց օտարերկրյա տերերի հովանավորությամբ հակառևոլյուցիոն խռովություններ էին կազմակերպում Սովետական իշխանության դեմ:

Այսպիսի ծանր պայմաններում Վ. Ի. Լենինը նշում էր Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի Սովետական ռեսպուբլիկաների պաշտպանունակության

ամրապնդման ու սոցիալիստական շինարարության խնդիրները, Սովետական Ռուսաստանի միջոցով մեծ օգնություն էր ցույց տալիս նրանց։ Անդրկովկասի կոմունիստների համար ուղեցույց աստղ էին Վ. Ի. Լենինի աշխատությունները, հոդվածները, զեկուցումներն ու հեռագրերը, որոնց մեջ նշվում էին նաև Անդրկովկասի Սովետական ռեսպուբլիկաների զարգացման ուղիները։ Սովետական Անդրկովկասի ներկայացուցիչները հաճախակի լինում էին Վ. Ի. Լենինի մոտ, ցուցումներ ստանում նրանից։

1920 թվականի մայիսին Վ. Ի. Լենինն ընդունում է Սովետական Ադրբեջանի Ռևկոմի նախագահ Ն. Նարիմանովին և Մոսկվայից Ադրբեջան մեկնելուց առաջ նրան կարևորագույն ցուցումներ է տալիս հետագա անելիքների մասին։ Հասնելով Բաքու, Ն. Նարիմանովը Վ. Ի. Լենինին անմիջապես հեռագիր է տալիս բնակչության ռևոլյուցիոն տրամադրությունների մասին։ Ադրբեջանի բոլշևիկները մեծ առաջնորդին սիստեմատիկաբար տեղյակ էին պահում իրենց ռեսպուբլիկայում անցկացվող սոցիալիստական միջոցառումների մասին, նրանից ստանում էին խորհուրդներ ու ցուցումներ։

Մեծ օգնություն ստանալով Սովետական Ռուսաստանից, Ադրբեջանի աշխատավորությունն ամեն ինչ անում էր նրան վառելանյութով օգնելու համար։ Վ. Ի. Լենինը բարձր էր գնահատում այս օգնությունը։ 1920 թ. ապրիլի 29-ին ապակու-ճենապակու արտադրության բանվորների Համառուսաստանյան համագումարում արտասանած ճառում Վ. Ի. Լենինն ասում էր. «... Մենք լուր ստացանք, որ Բաքվի պրոլետարիատն իշխանությունը իր ձեռքն է վերցրել և տապալել ադրբեջանական կառավարությունը։ Դա նշանակում է, որ մենք այժմ ունենք այնպիսի տնտեսական բազա, որը կարող է կենտրոնացնել մեր բոլոր արդյունաբերությունը»[1]։

1920 թ. դեկտեմբերին, Սովետների համառուսաստանյան VIII համագումարում խոսելով Սովետական Ռուսաստանի համար նավթի մեծ նշանակության մասին, Վ. Ի. Լենինն ասում է. «Պատերազմելու համար մեզ պետք է նավթ ունենալ մեր ձեռքում, առանց նավթի ժամանակակից պատերազմ մղել մենք չենք կարող»[2]։

Վ. Ի. Լենինի ցուցումներով Սովետական Ռուսաստանը, ինչպես նաև Սովետական Ադրբեջանը մեծ օգնություն էին կազմակերպում Հայաստանի և Վրաստանի Սովետական ռեսպուբլիկաներին, նրանց տալիս էին նավթ, վառելանյութ։

1920 թ. դեկտեմբերին Վ. Ի. Լենինը ընդունում է Սովետական Հայաստանի Ռևոլյուցիոն կոմիտեի անդամներ Ս. Տեր-Գաբրիելյանին և Ա. Մռավյանին, զրուցում նրանց հետ, ցուցումներ տալիս և խոստանում կոնկրետ օգնություն։ «Մենք ինքներս դժվարին դրության մեջ ենք,— ասում է Վ. Ի. Լենինը,— բայց Սովետական Հայաստանին կօգնենք ամեն կերպ»[3].

Վ. Ի. Լենինը անձամբ զբաղվում է այն ժամանակ թուրքական գավթիչների կողմից գրավված Ալեքսանդրոպոլն ու Հայաստանի միակ երկաթուղին ազատելու, Սովետական Հայաստանին տնտեսապես ու կադրերով օգնելու խիստ կարևոր հարցերով։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 138։

[2] Նույն տեղում, էջ 383։

[3] Ա. Մռավյան, Ընկեր Լենինը աուդիտորիայից։ Լենինի մոտ, Երևան, 1960, էջ 9։

Անգնահատելի օգնություն է ցույց տալիս Վ. Ի. Լենինը Սովետական Վրաստանին, վրաց ժողովրդին։ Պահպանվել են Վ. Ի. Լենինի բազմաթիվ նամակները վրացական կոմունիստներին, որոնց մասին Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների հնագույն գործիչ Մամիա Օրախելաշվիլին հիացմունքով ասել է. «Այդ նամակները սովորաբար երկար չէին, բայց նրանք այնպես էին գրված, որ կարդալիս չէիր հանգստանում այնքան ժամանակ, քանի դեռ չես կատարել նամակի հեղինակի տված խորհուրդները»։

1921 թվականի փետրվարի 18-ին Մոսկվայում ընդունելով Ֆ. Մախարաձեին, Վ. Ի. Լենինը նրան առաջարկում է գնալ Վրաստան և հանգամանորեն խորհուրդներ է տալիս կոմունիստների տակտիկայի առանձնահատկությունների մասին Վրաստանում։ Վ. Ի. Լենինի խորհուրդներն ու ցուցումները ամրապնդվում էին կոնկրետ գործերով։

1920—1921 թվականներին ՌՍՖՍՌ-ի, Ադրբեջանական ԱՍՌ-ի, Հայկական ՍՍՌ-ի և Վրացական ՍՍՌ-ի միջև փոխադարձաբար կնքվում են մի շարք համաձայնագրեր և պայմանագրեր՝ քաղաքական, տնտեսական և ռազմական հարցերի վերաբերյալ։ 1920 թվականի սեպտեմբերի 30-ին Մոսկվայում ռազմա-տնտեսական դաշնագիր է կնքվում ՌՍՖՍՌ-ի և Ադրբեջանական ՍՍՌ-ի միջև։ Նույն թվականի դեկտեմբերի 2-ին Երևանում ռազմա-քաղաքական պայմանագիր է ստորագրվում Սովետական Ռուսաստանի և Հայկական ՍՍՌ-ի միջև, 1921 թ. մայիսի 21-ին Մոսկվայում դաշնագիր է կնքվում ՌՍՖՍՌ-ի և Սովետական Վրաստանի միջև։ Այս բոլոր պայմանագրերի հիմքում ընկած էր իրավահավասարության և Սովետական Ռուսաստանի հետ եղբայրական համագործակցության լենինյան սկզբունքը։ Նրա նպատակն էր ամրապնդել սովետական ռեսպուբլիկաների դաշինքը, օգնել Անդրկովկասի ժողովուրդներին ամրապնդելու խաղաղությունն ու փոխադարձ բարեկամությունը, վերականգնել ու զարգացնել քայքայված ու հետամնաց ժողովրդական տնտեսությունը։

Վ. Ի. Լենինի ցուցումով Անդրկովկասի ռեսպուբլիկաները մտցվել էին ՌՍՖՍՌ-ի Պարենժողկոմատի պետական պլանի մեջ և այդ պլանով սիստեմատիկաբար ստանում էին պարենամթերք։

Ստանալով Ն. Նարիմանովի նամակը Ադրբեջանի պարենային ծանր վիճակի մասին, Վ. Ի. Լենինը անմիջապես կարգադրում է պարենամթերք ուղարկել Բաքու և այդ մասին սիստեմատիկ տեղեկություններ ուղարկել անձամբ Իրեն և Պարենժողկոմատին։ Միայն 1920 թ. մայիս—հունիս ամիսներին մի քանի հարյուր վագոն հաց է ուղարկվում Բաքու։ 1920 թ. նոյեմբերի 27-ին ՌԿԿ(բ) Կենտկոմի Քաղբյուրոն ընդունում է Վ. Ի. Լենինի գրած որոշումը՝ Սովետական Ադրբեջանին ցույց տրվող պարենային օգնությունը բարելավելու մասին։ Վ. Ի. Լենինն այդ համարում էր քաղաքական ու տնտեսական կարևորագույն խնդիր։ Ստուգելով այս որոշման կատարումը, Վ. Ի. Լենինը նոյեմբերի 30-ին Պարենժողկոմին գրում էր. «Խնդրում եմ հաղորդել՝ ստացել եք Դուք արդյոք Քաղբյուրոյի որոշումը Բաքվին 100 տոկոսանոց նորմայով պարենամթերքով բավարարելու և Ադրբեջանում պարենային քաղաքականությունը փոփոխելու մասին, և այդ որոշման կապակցությամբ Դուք ինչ կարգադրություն եք արել...»[5]։ 1920 թ. վերջին Վ. Ի. Լենինը հանձնարարում է

[4] Տե՛ս Ленинский сборник, XXXIV, стр. 322—323.
[5] Նույն տեղում, էջ 384։

շտապ խորհրդակցություն գումարել և քննարկել Ն. Նարիմանովի խնդրանքը՝ Ադրբեջանին որոշակի քանակությամբ մանուֆակտուրա տալու ծայրահեղ անհրաժեշտության մասին[6]։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո, Վ. Ի. Լենինի կարգադրությամբ Երևան են ուղարկվում երեք միլիարդ ռուբլի դրամ, մեծ քանակությամբ հաց, նավթ և այլ ապրանքներ[7]։

Ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ անդրկովկասյան ռեսպուբլիկաների ամրապնդման համար խիստ կարևոր նշանակություն ունեցան պարտիայի X համագումարի (1921 թ. մարտ) որոշումները՝ նոր տնտեսական քաղաքականության (ՆԷՊ) անցնելու, պարտիայի միասնության, ազգային և այլ հարցերի վերաբերյալ։ Վ. Ի. Լենինի ցեկուցման հիման վրա ՆԷՊի մասին համագումարի ընդունած որոշումը ապահովում էր բանվոր դասակարգի և գյուղացիության ամուր տնտեսական դաշինքը սոցիալիզմի կառուցման համար։ Այդ հիմնական խնդրին էր ծառայում նաև համագումարի որոշումը ազգային հարցում պարտիայի հերթական խնդիրների մասին։ Նշելով, որ բուրժուական հասարակությունը կատարյալ սնանկ դուրս եկավ ազգային հարցի լուծման գործում, համագումարն անհրաժեշտ էր գտնում ապահովել ազգային խաղաղությունն ու ազգային ազատությունը, օգնել ոչ ռուս ժողովուրդների աշխատավոր մասսաներին՝ հասնելու առաջ անցած Կենտրոնական Ռուսաստանին, զարգացնելու և ամրապնդելու իրենց մոտ սովետական պետականությունը, տնտեսության ու իշխանության մայրենի լեզվով գործող օրգանները, մամուլը, դպրոցը, թատրոնը, ակումբային գործը և այլն, կազմակերպելու և արագացնելու տեղական ազգային կադրերի պատրաստման գործը[8]։ Համագումարը դատապարտեց ազգային հարցում երկու թեքումները՝ մեծապետական (վելիկոռուսական) շովինիզմը և տեղական նացիոնալիզմը, որոնք խանգարում էին լենինյան ազգային քաղաքականության իրագործմանը։

Մարտի 16-ին ելույթ ունենալով X համագումարի փակման ժամանակ, Վ. Ի. Լենինը պատգամավորների ուշադրությունը հրավիրեց Բաքու—Թիֆլիս բացվող նավթամուղի և այն մինչև Բաթումի հասցնելու հնարավորության վրա[9]։

Համագումարից հետո ավելի է ուժեղանում օգնությունը Անդրկովկասի աշխատավորությանը։

1921 թ. ապրիլին Գ. Կ. Օրջոնիկիձեին ուղարկած հեռագրում Վ. Ի. Լենինը հաղորդում էր. «Ստացա Ձեր ծածկագիրը Անդրկովկասի պարենային հուսահատական դրության մասին։ Մենք ձեռք առանք մի շարք միջոցներ, Հայաստանին մի քիչ ոսկի տվինք, հաստատեցինք պարենկոմին արված ամեն տեսակ հանձնարարություններ»[10]։ Նույն ամսին Վ. Ի. Լենինը Պարենժողկոմատի Ռոստովի լիազորին առաջարկում էր ձեռք առնել վճռական միջոցներ Բաքվի, Վրաստանի և Հայաստանի մատակարարման համար[11]։ Վ. Ի. Լենինի

---

[6] Նույն տեղում, XXXVI, էջ 159։

[7] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 521, ՄԼԻ արխիվ, ֆ. 2, ց. 1, գ. 10518։

[8] Տե՛ս ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերանսների և կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում, մաս 1, էջ 713—714։

[9] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 331։

[10] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 521։

[11] Տե՛ս Ленинский сборник, XX, стр. 228.

հանձնարարությամբ Սովետական Վրաստանում հիդրոէլեկտրական կառուցելու համար բաց է թողնվում հազար յոթ հարյուր ռուբլի՝ ոսկով։

Վ. Ի. Լենինի առաջարկությամբ Սովետական Ռուսաստանի Աշխատանքի և պաշտպանության խորհուրդը բազմիցս քննարկում է Անդրկովկասի ռեսպուբլիկաներին օգնություն ցույց տալու հարցը։ Միջոցներ են բաց թողնվում նրանց համար արտասահմանում անհրաժեշտ ապրանքներ գնելու համար։

Վ. Ի. Լենինը ուշադրությամբ հետևում և անձամբ զբաղվում էր տեղական ազգային կադրեր դաստիարակելու, կենտրոնական շրջաններից Սովետական Անդրկովկաս պարտիական, սովետական, տնտեսական կադրեր ուղարկելու, Անդրկովկասի պարտիական կազմակերպություններն ամրապնդելու գործով։

Պարտիայի ստեղծման, Սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի և նրա նվաճումների համար մղված համատեղ պայքարից Վ. Ի. Լենինը անձամբ գիտեր և շատ բարձր էր գնահատում Անդրկովկասի պարտիական գործիչներից շատերին, հմտորեն օգտագործում և օգնում էր նրանց հետագա աճին։

1919 թվականի հոկտեմբերի 15-ին Գ. Կ. Օրջոնիկիձեն նամակով Վ. Ի. Լենինին հայտնում էր Հարավային ռազմաճակատի 13-րդ և 14-րդ բանակների շտաբներում տրոցկիստների քայքայիչ աշխատանքի հետևանքով եղած աղաղակող անկարգությունների և հանցավոր թափթփածության մասին։ Ստանալով այս նամակը, Վ. Ի. Լենինը հաջորդ օրը նրա վրա մակագրում է. «Թե Ունշլիխտի, թե Ստալինի կարծիքների համաձայն, Սերգոն շատ հուսալի ռազմական աշխատող է։ Որ նա ամենահավատարիմ և ամենագործունյա ռևոլյուցիոներ է, ես ինքս նրան գիտեմ 10 տարուց ավելի»[12]։

1919 թ. սեպտեմբերին Վ. Ի. Լենինի ստորագրությամբ Կամոյին տրված վկայականում ասված էր. «Սույնը ներկայացնող ընկ. Կ. Պետրովին, որն ունի 483 տոմսը (մինչև 1919 թ. հոկտեմբերի 1-ը) ԿԳԿ շենքը մտնելու համար և որը աշխատում է ԿԳԿ բաժիններից մեկում, ճանաչում եմ անձամբ»։

Վ. Ի. Լենինը մեծ հոգատարություն էր ցուցաբերում Անդրկովկասի ժողովուրդների զավակներից ազգային ղեկավար կադրեր դաստիարակելու և կոփելու գործին, ներկայացնում էր նրանց բարձր պահանջներ, նամակներով, հեռագրերով, անձնական զրույցներով օգնում էր նրանց ճիշտ կողմնորոշվելու, թույլ տված սխալներն ուղղելու։ Խոսելով լենինյան ղեկավարության մեթոդների, Կովկասի կոմունիստներին Վ. Ի. Լենինի ուղարկած նամակների անգնահատելի նշանակության մասին, Մ. Օրախելաշվիլին գրել է, որ Լենինը չէր սահմանափակվում միայն դիրեկտիվներ տալով, նա ժամանակ առ ժամանակ ստուգում էր, թե ինչ է արվում, ինչ է արված, ինչ պետք է անել։ «Ձգում էր նրանց, որոնցից կախված էր գործի հաջողությունը։ Պահանջում էր, անհրաժեշտության դեպքում սպառնում էր պարտիական անողոք «դատաստանով»։ Վերընթեռնել Լենինի նամակները, նույնիսկ նրա՝ համաշխարհային պրոլետարիատի առաջնորդի համար չնչին թվացող հարցերի մասին, այդ նշանակում է անցնել կանխատեսման ու ղեկավարման մի ամբողջ դպրոց։

---

[12] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 460։

Այդ նամակները, որպես կանոն երկար չէին, բայց գրված էին այնպես, որ կարդալուց հետո չես հանգստանում այնքան ժամանակ, քանի դեռ չես կատարել նամակի հեղինակի խորհուրդները»[13]։

Վ. Ի. Լենինի առաջարկով 1921 թ. ապրիլին Անդրկովկաս աշխատանքի է ուղարկվում մինչ այդ Վ. Ի. Լենինի անմիջական ղեկավարությամբ Մոսկվայում աշխատող Ա. Մյասնիկյանը։ Մոսկվայից մեկնելուց առաջ Վ. Ի. Լենինն ընդունելով Ա. Մյասնիկյանին, մանրամասն զրույց է ունենում նրա հետ, խորհուրդներ ու ցուցումներ է տալիս Կովկասի կոմունիստների անելիքների մասին։ «... Մենք մանրամասն զրուցեցինք այն մասին,— գրում է Ա. Մյասնիկյանը,— թե ինչպես պիտի աշխատել Կովկասում, ինչ ձևով պետք է հաշվի առնել ռուսական ռևոլյուցիայի փորձը, ինչ քաղաքականություն վարել Թուրքիայի նկատմամբ։ Լենինը խորհուրդներ էր տալիս զգույշ և նրբանկատ լինել արևելքի ժողովուրդների նկատմամբ... Ի խոսքով նա այն ժամանակ շարադրում էր մեր այն գիծը, որը մենք 1921 թվականից սկսած անց ենք կացնում Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում»[14]։

Այդ նույն ժամանակ Վ. Ի. Լենինը նամակ է ուղարկում Կովկասի ընկերներին։ Այդ նամակը «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների ռեսպուբլիկայի կոմունիստ ընկերներին» վերնագրով գրված է 1921 թ. ապրիլի 14-ին և դեռ այն ժամանակ բազմիցս հրատարակվել է բոլշևիկյան մամուլում[15]։ Կովկասի կոմունիստների հետագա ամբողջ գործունեության համար ծրագրային նշանակություն ունեցող այս նամակում Վ. Ի. Լենինը ջերմորեն ողջունում էր Կովկասի սովետական ռեսպուբլիկաներին և հույս էր հայտնում, որ նրանց սերտ դաշինքը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որը չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում։ Վ. Ի. Լենինը խնդիր է դնում ամրապնդել Սովետական իշխանությունը, ազգային խաղաղությունը, խելացիորեն հաշվի առնել տեղական առանձնահատկությունները, Կովկասի կոնկրետ պայմանները, նշում էր էլեկտրիֆիկացիայի, ոռոգման խոշոր աշխատանքների ծավալման անհրաժեշտությունը։

Կովկասի կոմունիստների համար ամենակարևոր խնդիրը Վ. Ի. Լենինը համարում էր Սովետական իշխանության պահպանումն ու զարգացումը, որպես անցում դեպի սոցիալիզմ։ Նա հատկապես ընդգծում էր Անդրկովկասյան ռեսպուբլիկաների դրության առանձնահատկությունը՝ ի տարբերություն Սովետական Ռուսաստանի դրության ու պայմանների։

«Ավելի դանդաղ, ավելի զգույշ,— գրում էր Վ. Ի. Լենինը,— ավելի սիստեմատիկ անցում դեպի սոցիալիզմ,— ահա թե ինչն է հնարավոր ու անհրաժեշտ Կովկասի ռեսպուբլիկաների համար՝ ի տարբերություն ՌՍՖՍՌ-ի։ Ահա թե ինչն է հարկավոր հասկանալ ու կարողանալ իրականացնել, ի տարբերություն մեր տակտիկայի»[16]։ Ելնելով Անդրկովկասի կոնկրետ պայմաններից, Վ. Ի. Լենինն առաջարկում էր աշխատել անհապաղ բարելավել գյուղացիների դրությունը և սկսել էլեկտրիֆիկացիայի, ոռոգման խոշոր աշխատանքներ։

---

[13] М. Орахелашвили. Ленин и ЗСФСР. Тифлис, 1925, стр. 15.

[14] Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին, Երևան, 2, 1958, էջ 191։

[15] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 402—405։

[16] Նույն տեղում, էջ 404։

«Ոռոգումն ամենից ավելի է պետք և ամենից ավելի կվերաստեղծի երկիրը, կվերածնի նրան, կթաղի անցյալը, կամրապնդի անցումը դեպի սոցիալիզմ»[17]։

1921 թ. ընդունելով Դ. Բունյաթզադեին, Վ. Ի. Լենինը նշում է ազգային հարցը ճիշտ ըմբռնելու և կենսագործելու խիստ կարևորությունը։ Կրեմլի իր կաբինետում ընդունելով Բաքվի բանվորների պատվիրակությանը և նրանց հետ մանրամասն զրույց ունենալով Ադրբեջանի նավթային արդյունաբերության դրության և նրա զարգացման մասին, Վ. Ի. Լենինը Բաքվի աշխատավորությանը ցուցում է տալիս անհապաղ սկսել լուծել երկու հարց—վերականգնել նավթային արդյունաբերությունը և մշակել Մուղանի տափաստանը։

Բաքու այցելելու մասին բանվորների խնդրանքին Վ. Ի. Լենինը պատասխանում է, որ նա շատ է ուզում հանդիպել Բաքվի բանվորներին, որ նրանց նա գիտե, որպես պրոլետարիատի լավագույն ջոկատի, և, որ առաջին իսկ փոքրիկ հնարավորության դեպքում, նա կկատարի բանվորների առաջարկը։

1922 թվականի ապրիլին Վ. Ի. Լենինը հանգստանալու և բուժվելու համար ցանկություն է հայտնում գալ Վրաստան։ Այդ կապակցությամբ Վ. Ի. Լենինի և Գ. Կ. Օրջոնիկիձեի միջև նամակագրություն է տեղի ունենում, որը ցույց է տալիս, թե ինչքան լավ էր ուսումնասիրել Վ. Ի. Լենինը Վրաստանը, նրա բնական, կլիմայական պայմանները, հանգստի վայրերը։ Նա ուզում էր հանգստի համար այնպիսի տեղ ընտրել, որպեսզի հարմար լինի նաև իր հարազատների համար, որոնց հետ պատրաստվում էր մեկնել Վրաստան։ Ապրիլի 17-ին Ս. Օրջոնիկիձեին ուղարկած նամակում Վ. Ի. Լենինը գրում է. «Ընկ. Սերգո, ուղարկում եմ քեզ ևս մի քանի փոքր տեղեկանքներ։ Նրանք ինձ հաղորդել է բժիշկը, որն ինքն անձամբ եղել է տեղում և լիովին վստահելի մարդ է»[18]։ Այնուհետև նամակում բերվում էին տվյալներ Աբաստումանի, Բորժոմի աշխարհագրական և կլիմայական պայմանների մասին։

Առողջության վիճակի խիստ վատացման պատճառով Վ. Ի. Լենինին չհաջողվեց իրականացնել իր այս մտադրությունը։

Անդրկովկասի բոլշևիկները երախտագիտությամբ ընդունում և ճշմարտությամբ կատարում էին Վ. Ի. Լենինի բոլոր ցուցումները։

Անմիջապես պատասխանելով Վ. Ի. Լենինի 1921 թ. մարտի 2-ի նամակին, որի մեջ մեծ առաջնորդը ոգջունում էր վրացական կոմունիստներին և կոնկրետ խնդիրներ էր դնում Վրաստանում սովետական կարգի ամրապնդման համար, Գ. Կ. Օրջոնիկիձեն հեռագրով հայտնում էր Վ. Ի. Լենինին, որ վրացի կոմունիստները լիովին համերաշխ են նրա հետ։ Այնուհետև նա հաղորդում էր վրացական Ռևկոմի պատասխան հեռագիրը, որտեղ ռևկոմի անդամներ Մ. Օրախելաշվիլին և Շ. Էլիավան գրում էին. «Առաջին հերթին հաղորդեցեք ընկ. Լենինին մեր հիացմունքի շնորհակալությունը ողջույնի համար և մեր խորը համոզմունքն այն բանում, որ նա ոչ մի րոպե չի մոռանում մեզ, վրացական կոմունիստներիս, չի հրաժարվի մեզ խելացի խորհուրդներ տալուց և կապահովի սխալներից...»։

Մ. Օրախելաշվիլին բազմիցս ընդգծել է Վ. Ի. Լենինի նամակների, խորհուրդների, ցուցումների անգնահատելի նշանակությունը Անդրկովկասի

---

[17] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 404։

[18] Ленинский сборник, XXXV, стр. 345.

կոմունիստների համար, համեմատել է նրանք լուսարձակի լույսի հետ, որը լուսավորում էր իրենց ճանապարհը բարդ խնդիրներ լուծելիս: «Ընկեր Լենինը,— գրել է Մ. Օրախելաշվիլին,— մոտ մասնակցություն էր ցույց տալիս անդրկովկասյան ռեսպուբլիկաների քաղաքական և տնտեսական բախտի կանխորոշմանը: Այդ մասնակցությունը որպես կանոն, վճռական և միշտ բարերար ազդեցություն էր ունենում[19]:

Բերելով Վ. Ի. Լենինի ապրիլի 14-ի նամակը Կովկասի կոմունիստներին, Մ. Օրախելաշվիլին նշում է, որ այն «լայնախոհության, պարզության և հստակության. բարդ քաղաքական և տակտիկական պրոբլեմների լենինյան ընդգրկումների օրինակ է»[20]:

Նշելով Վ. Ի. Լենինի ցուցումների հակայական նշանակությունը վրացական կոմունիստների համար, Ֆ. Մախարաձեն Մ. Ցխակայային ուղղած նամակում ասում էր. «Դրությունը աստիճանաբար բարելավվում է: Այդ բանում առաջին հերթին օգնեց Լենինը...»[21]:

Իմպերիալիզմի լծից ազատագրված Անդրկովկասի աշխատավորությունը անսահման սիրով էր տոգորված Վ. Ի. Լենինի նկատմամբ, մեծ երախտագիտությամբ էր ընդունում նրա ցուցումներով Սովետական Ռուսաստանի իրենց ցույց տված մեծ օգնությունը:

Պարտիական ու սովետական համագումարները, բանվորների, գյուղացիների, կոմերիտականների ժողովները իրենց երախտագիտության առաջին խոսքերը, ողջույնի հեռագրերը ուղարկում են Մոսկվա, Կրեմլ, Լենինին: Ուրախությամբ հաղորդում են մեծ առաջնորդին իրենց սոցիալիստական նվաճումների մասին:

Անդրկովկասյան Սովետական ռեսպուբլիկաների Սովետների համագումարները և նրանց մայրաքաղաքների Սովետները Վ. Ի. Լենինին ընտրում են իրենց պատվավոր նախագահն ու անդամը, աշխատավորության կամքով որոշումներ են հանվում Վ. Ի. Լենինին արձան կանգնեցնելու մասին:

1920 թ. հուլիսի 11-ին կարմիրբանակայիններին և նավաստիներին դեպուտատների Բաքվի Սովետի առաջին հանդիսավոր նիստը Ա. Միկոյանի ստորագրությամբ հեռագրում հարազատ Իլյիչին հաղորդում էր, որ նա ընտրվել է Սովետի պատվավոր նախագահ: «Վստահեք մեզ, որպես Կարմիր Հյուսիսի և վերածնվող արևելքի սահմանին գտնվող միջազգային կոմունիզմի պոստ պատվարի»[22],— գրում էին նիստի մասնակիցները:

1921 թվականի նոյեմբերի 8-ին Աջարական Ավտոնոմ Ռեսպուբլիկայի Սովետների առաջին համագումարի պատգամավորները իրենց հարազատ Լենինին հաղորդում էին, որ իրենք Բաթումի պրոլետարների հետ միասին մասնակցելով Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի տարեդարձի տոնակատարությանը և մասնակցելով ամբողջ աշխարհի աշխատավորության պանծալի առաջնորդի արձանի բացմանը, հավաքվելով իրենց առաջին համագումարին, ընտրել են նրան իրենց պատվավոր նախագահ: «Հաղորդելով Ձեզ այդ մասին,— գրում էին նրանք,— հղում ենք Ձեզ, համաշխարհային սո-

[19] М. Орахелашвили. Ленин и ЗСФСР. Тифлис, 1925, стр. 3.
[20] Նույն տեղում, էջ 8:
[21] ՄԼԻ արխիվ, ֆ. 157, ցուց. 3, գ. 68:
[22] Письма трудящихся к В. И. Ленину, М., 1960, стр. 194.

ցիալիստական ռևոլյուցիայի մեծ ոգեշնչողիդ մեր ջերմ ողջույնը և երկար կյանքի ցանկությունները ի փառս և ի երջանկություն ամբողջ աշխարհի աշխատավորության»[23]։

1921 թ. փետրվարին Վրաստանի և Ադրբեջանի սահմանային Փոյլի կայարանի մոտ Դուռ գետի վրայով անցնող կամուրջի շինարարության բանվորները, գյուղացիները և կարմիրբանակայինները՝ թվով 1200 մարդ, հաջողությամբ ավարտելով իրենց աշխատանքները, որոշում են Փոյլիի կամուրջը անվանել Վ. Ի. Լենինի անվան և այդ մասին հեռագիր են ուղարկում «Միջազգային եղբայրության և համաշխարհային ռևոլյուցիայի առաջնորդ ընկեր Լենինին»։ «Մենք որոշեցինք,— գրում էին նրանք,— վրացական բանվորների ձեռքերով ընդամենը չորս օրում վերականգնված Փոյլիի կամուրջը անվանել Լենինյան կամուրջ, որպեսզի նա դառնա առաջին հուշարձանը վրացի և ռուս պրոլետարների համատեղ, համերաշխ ընտանիքի և միավորի այդ երկու ազգերին այնպես ամուր, ինչպես մենք միացրել ենք Դուռ գետի երկու ափերը։

Համաշխարհային ռևոլյուցիայի թանկագին առաջնորդ ընկեր Լենին, մի մոռացեք, որ կամուրջով վրաց ժողովուրդը ձգտում է Ձեզ, որպես իր և ամբողջ աշխարհի բանվորների և գյուղացիների ազատարարի»[24]։

1921 թ. հուլիսին Ալեքսանդրոպոլի գյուղական սեկոմների ներկայացուցիչների համագումարը ողջունելով Վ. Ի. Լենինին, նրան ուղղած հեռագրում նշում էր. «Մենք, Ալեքսանդրոպոլի չքավոր գյուղացիությունը, որ շահագործվում էինք բեկերի և փաշաների կողմից, ներկա սովետական հասարակարգում օգտվում ենք ռուսական ռևոլյուցիայի բոլոր բարիքներից, ռևոլյուցիա, որը դեռ շատ ճնշված ժողովուրդների կազատագրի նրանց դարավոր ստրկությունից։ Կեցցե՛ մեր Լենինը»[25]։

Ողջույնի բազմաթիվ հուզիչ հեռագրեր են ուղարկում Վ. Ի. Լենինին թուրքական զավթիչների հալածանքներից Սովետական Ռուսաստանում և Անդրկովկասում իրենց փրկությունը գտած բազմահազար հայ գաղթականները[26]։ Այդ մասին բազմաթիվ փաստաթղթեր են պահպանվել Հայկական ՍՍՌ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և սոցիալիստական շինարարության Պետական Կենտրոնական արխիվում[27]։

Երևանի քաղաքային Սովետը ողջունելով իր պատվավոր անդամ ընկեր Լենինին, գրում էր. «Սովետական Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, սովետական մեծ ֆեդերացիայի ընդհանուր ընտանիքում, խաղաղ պայմաններում կոփում են կոմունիստական հասարակության հիմքերը. նվիրվելով իմպերիալիստների ու նրանց սպասարկուների՝ հայ նացիոնալիստական պարտիաների կողմից ավերված իրենց օջախների վերականգնման ստեղծարար աշխատանքին։ Դրանով Հայաստանի աշխատավորները պարտական են Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիային և առաջին հերթին համաշխարհային պրոլետարիատի դասակարգային պայքարը ղեկավարող Ձեր հանճարին»[28]։

---

[23] Նույն տեղում 249.

[24] Նույն տեղում, էջ 226։

[25] ЦГАОР АрмССР, ф. 12/144, оп. 1, д. 283, л. 67.

[26] Նույն տեղում, ф 4/114, оп. 1, д. 35, л. 34, д. 31, л. 58 և այլն։

[27] Տես նույն տեղում, ф. 2.

[28] Письма трудящихся к В. И. Ленину, стр. 359.

Անդրկովկասի աշխատավորները խորը երախտագիտությամբ էին նշում այն մեծ օգնությունը, որ իրենք ստանում էին Սովետական Ռուսաստանից։

Անդրկովկասյան ռեսպուբլիկաների պարենային աշխատողների համագումարը 1921 թ. հոկտեմբերին ընդգծում էր, որ Ադրբեջանը սովետական կարգեր հաստատելուց հետո Ռուսաստանից ստացել է մեկ միլիոն փութ հացամթերք, 50 վագոն շաքար, 34 միլիոն արշին մանուֆակտուրա և այլն[29]։ 1922 թ. փետրվարին Հայաստանի Սովետների առաջին համագումարը նշում էր, որ 1921 թ. ընթացքում Սովետական Հայաստանը ՌՍՖՍՌ-ից ստացել է 3,5 միլիոն ռուբլի՝ ոսկով, 2.895.000 փութ կենսամթերքներ և զանազան ապրանքներ[30]։ Ս. Օրջոնիկիձեն 1922 թ. դեկտեմբերին Բաքվում Սովետների անդրկովկասյան համագումարում տված զեկուցման մեջ խոսելով Սովետական Ռուսաստանից սաացվող անգնահատելի օգնության մասին, նշում էր, որ Անդրկովկասը այնտեղից ստանում է հաց, «ոսկի՝ Մուղանում ոռոգման սիստեմը վերականգնելու. տրակտորներ գնելու, Հայաստանում բամբակագործությունը զարգացնելու, Թիֆլիսի մոտ հիդրոէլեկտրակայան, Վրաստանում տեքստիլ ֆաբրիկա կառուցելու համար։ «Սովետական իշխանության գոյությամբ, իրենց ազատագրությամբ,— ասում է Ս. Օրջոնիկիձեն,—Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի աշխատավոր մասսաները ամբողջովին պարտական են Ռուսաստանին։ Եթե չլիներ Սովետական Ռուսաստանը՝ չէր լինի Սովետական Ադրբեջանը, Սովետական Վրաստանը, Սովետական Հայաստանը»[31]։ Համագումարի մասնակիցների ծափահարությունների տարափի տակ Ս. Օրջոնիկիձեն հայտարարում է, որ «Միայն Ռուսաստանի բանվորների և գյուղացիների հետ, Ռուսաստանյան Կարմիր Բանակի հետ դաշինք կնքելով ադրբեջանական բանվորներն ու գյուղացիները, վրացական բանվորներն ու գյուղացիները, հայկական բանվորներն ու գյուղացիները ձեռք բերին իրենց ազատագրումը»[32]։

Անդրկովկասում Սովետական իշխանության ամրապնդման ու զարգացման, ժողովուրդների բարեկամության, նրանց տնտեսական ու կուլտուրական հետագա աճի համար անգնահատելի նշանակություն ունեցան Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ 1922 թվականին Անդրկովկասի Սոցիալիստական ֆեդերատիվ Սովետական ռեսպուբլիկայի (ԱՍՖՍՌ) և Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության (ՍՍՌՄ) ստեղծումը։

Անդրկովկասում Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից Վ. Ի. Լենինը հետևողականորեն մշակում էր Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների միավորման գաղափարը, նշում էր նրա իրականացման կոնկրետ ուղիները։ Դեռևս 1921 թ. ապրիլի 2-ին «Ազնեթի»-ի կառավարիչ Ա. Պ. Սերեբրովսկուն ուղարկած նամակում Վ. Ի. Լենինը ընդգծում էր մարզային տնտեսական կենտրոնի անհրաժեշտությունը Ադրբեջանի և Վրաստանի համար[33]։ Նույն թվականի ապրիլի 9-ին Գ. Կ. Օրջոնիկիձեին տված հեռագրում խոսելով Անդրկովկասի պարենային ծանր վիճակի և նրանից դուրս

---

[29] Տե՛ս «Պրավդա Գրուզիի», 1921, 18 հոկտեմբերի։

[30] «Խորհրդային Հայաստան» № 26, 29, 1922։

[31] Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, 1950, էջ 111։

[32] Նույն տեղում։

[33] Ленинский сборник. XX, стр. 158.

գալու հնարավորության մասին, Վ. Ի. Լենինը համառորեն պահանջում է ամբողջ Անդրկովկասի համար ստեղծել մարզային տնտեսական օրգան»[34]։

1921 թ. ապրիլին Արհմիությունների համառուսաստանյան Կենտրոնական Խորհրդի կոմունիստական ֆրակցիայի նիստում արտասանած եզրափակիչ ճառում Լենինն ասում էր. «Այժմ սովետական է դարձել Վրաստանը։ Խոսքը կովկասյան ռեսպուբլիկանների միավորման մասին է, մեկ տնտեսական կենտրոնում՝ վրացական, ադրբեջանական և հայկական։ Նավթ արտադրում է Ադրբեջանը, այն անհրաժեշտ է տանել Բաթումիի միջով վրացական տերիտորիայով, այնպես որ կլինի միասնական տնտեսական կենտրոն»[35]։

Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների ռեսպուբլիկայի կոմունիստ ընկերներին ուղղած նամակում Վ. Ի. Լենինը ընդգծում էր Կովկասի սովետական ռեսպուբլիկանների սերտ դաշինքի մասին, որը կստեղծեր ազգային խաղաղության չտեսնված օրինակ։ Ա. Մյասնիկյանի հետ ունեցած զրույցում Վ. Ի. Լենինը ասում է, որ այս նամակում նա նորից հատկապես չի նշում անդրկովկասյան ռեսպուբլիկանների միավորման անհրաժեշտությունը, որովհետև ինքն այդ մասին կովկասյան ընկերներին արդեն ուղարկել է հեռագրեր՝ համապատասխան խորհուրդներով ու ցուցումներով։

Մ. Օրախելաշվիլին շատ դիպուկ կերպով նշել է, որ անդրկովկասյան ժողովուրդների պետական միավորման հայրական իրավունքը անառարկելիորեն պատկանում է Վ. Ի. Լենինին[36]։

Անդրկովկասյան բոլշևիկները լիովին հավանություն տվեցին Անդրկովկասյան սովետական ռեսպուբլիկանների միավորման մասին լենինյան ցուցումներին և հսկայական աշխատանք ծավալեցին նրանց իրագործման համար։ Այս գործում առանձնապես մեծ են Ս. Օրջոնիկիձեի, Ս. Կիրովի և Ա. Մյասնիկյանի ծառայությունները։ 1921 թ. հուլիսին Վ. Ի. Լենինը հեռագրով Ս. Օրջոնիկիձեին հայտնում էր, որ բացի պարտիական աշխատանքի ղեկավարությունից, նրա վրա էր դրվում նաև ներքին ու արտաքին քաղաքականության ղեկավարությունը։ Պարտիայի հանձնարարականով Ս. Օրջոնիկիձեն, Ս. Կիրովն ու Ա. Մյասնիկյանը պարտիական ու աշխատավորական ժողովներ են անցկացնում, զեկուցումներ կարդում, ելույթներ ունենում, հոդվածներ, բանաձևեր են գրում Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության, Անդրկովկասյան ռեսպուբլիկանների միավորման լենինյան գաղափարի մասին։ Անդրկովկասի աշխատավորությունը բոլշևիկների ղեկավարությամբ վճռականորեն մերկացնում էր բոլոր գույնի նացիոնալիստներին, որպես ժողովրդի բարեկամության ամրապնդման թշնամիների։

1921 թ. նոյեմբերի 3-ին ՌԿՊ(բ) Կենտկոմի Կովկասյան Բյուրոն որոշում է ընդունում Անդրկովկասյան Ռեսպուբլիկանների ֆեդերացիա ստեղծելու մասին։ Այս որոշումը, որը լիովին բխում էր լենինյան ցուցումներից, մեծ համակրանքով է ընդունվում Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի պարտիական ու անպարտիական լայն մասսաների կողմից։

1921 թվականի նոյեմբերի 28-ին Վ. Ի. Լենինը գրում է. «Անդրկովկասյան Ռեսպուբլիկանների ֆեդերացիա կազմելու վերաբերյալ առաջարկի նախագիծը», որը հաջորդ օրը ընդունվում է ՌԿՊ(բ) Կենտկոմի Քաղբյուրո-

[34] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 521։
[35] Ленинский сборник, XX, էջ 178։
[36] М. Орахелашвили. Ленин и ЗСФСР, стр. 13.

յում։ Այդ պատմական փաստաթղթում ասված էր. «1) Անդրկովկասյան ռեսպուբլիկաների ֆեդերացիան համարել սկզբունքորեն բացարձակապես ճիշտ և անպայման իրագործման ենթակա, սակայն գործնականապես անհապաղ իրագործելու իմաստով. այսինքն՝ վաղաժամ պահանջում է որոշ ժամանակ քննարկման, պրոպագանդայի և սովետական եղանակով ներքևից անցկացնելու համար։

2) Առաջարկել (Կովկասյան բյուրոյի միջոցով) Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի կենտրոնական կոմիտեներին՝ ֆեդերացիայի հարցն ավելի լայնորեն դնել պարտիայի և բանվորական ու գյուղացիական մասսաների քննարկմանը, եռանդուն պրոպագանդա մղել ֆեդերացիայի օգտին և այն անցկացնել յուրաքանչյուր ռեսպուբլիկայի Սովետների համագումարների միջոցով, մեծ օպոզիցիա լինելու դեպքում ճշտորեն ու ժամանակին տեղեկացնել ՌԿՊ Կենտկոմի Բաղբյուրոյին»[37]։

Պարտիայի Կենտկոմի Բաղբյուրոյի որոշման և Վ. Ի. Լենինի ցուցումների հիման վրա Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաներում բացատրական լայն կամպանիա է ծավալվում Անդրֆեդերացիայի ստեղծման անհրաժեշտության հարցի շուրջը։ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի ժողովրդական լայն մասսաները միահամուռ պաշտպանում և ջերմորեն ողջունում են ֆեդերացիայի ստեղծման առաջարկը։ 1921 թվականի վերջին և 1922 թվականի սկզբին ամբողջ Անդրկովկասում ծավալվում է հզոր ժողովրդական շարժում՝ Անդրֆեդերացիա ստեղծելու օգտին։ 1922 թ. փետրվարին Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների համագումարը հակահարված տալով նացիոնալիստների սակավաթիվ խմբին, հավանություն է տալիս Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի սովետական ռեսպուբլիկաների միջև դաշնակցային պայմանագիր կնքելու նախագծին։ Մարտի 12-ին այդ պայմանագիրը հաստատվում է եղբայրական ռեսպուբլիկաների կենտրոնական գործադիր կոմիտեների Թիֆլիսում տեղի ունեցած լիազոր կոնֆերանսում։ 1922 թ. դեկտեմբերի 13-ին Բաքվում տեղի ունեցած Սովետների Անդրկովկասյան առաջին համագումարում որոշում է ընդունվում Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Ռեսպուբլիկա (ԱՍՖՍՌ) կազմելու մասին։ Ընդունվում է Անդրֆեդերացիայի կոնստիտուցիան։

Անդրկովկասյան ֆեդերացիան Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի ժողովուրդների եղբայրական միասնության և բարեկամության գաղափարների մարմնացումն էր։ Իր գոյության 15 տարիների ընթացքում, մինչև 1936 թվականի վերջերը, երբ Անդրկովկասյան երեք ռեսպուբլիկաները ՍՍՌՄ Նոր կոնստիտուցիայի հիման վրա դարձան միութենական ռեսպուբլիկաներ, Անդրֆեդերացիան մեծապես նպաստեց երկրամասի ժողովրդական տնտեսության և կուլտուրայի զարգացման, ազգային կադրեր աճեցնելու և դաստիարակելու գործին, ժողովուրդների բարեկամության հետագա ամրապնդմանը։

Անդրֆեդերացիան խոշոր դեր կատարեց Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաները մեկ միության մեջ միավորելու լենինյան իդեայի իրականացման գործում։ Անդրկովկասյան Սովետների առաջին համագումարը արտահայտելով եղբայրական ռեսպուբլիկաների աշխատավորության կամքը, որոշում է մտնել կազմավորվող Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության միասնական ընտանիքի մեջ։

[37] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 136։

Համագումարը ողջույնի հեռագիր է ուղարկում Վ. Ի. Լենինին, հաստատ համոզմունք հայտնելով, որ սրա ղեկավարությամբ իրենք կհասնեն Սովետական իշխանության ամրապնդմանը և ժողովրդական տնտեսության վերականգնմանն ու զարգացմանը։ Հեռագրում ասված էր. «Բաքվում գումարված Սովետների Անդրկովկասյան համագումարը սովետական պայմաններում ամրապնդելով Անդրկովկասի երեք եղբայրական ռեսպուբլիկաների աշխատավորության անխզելի դաշինքը, վերջնականապես աղատագրվելով Անտանտի և նրա սպասարկուների — մենշևիկների, դաշնակների և մուսավաթականների լծից, որոնք արհեստականորեն երեք մասի են կտրատում Անդրկովկասի միասնական կենդանի մարմինը, հղում են Ձեզ, համաշխարհային իմպերիալիզմի դեմ ապրստամբված ու ապստամբվող Արևմուտքի և Արևելքի բազմամիլիոն աշխատավոր մասսաների առաջնորդին, մեր եղբայրական, բոցավառ հարավային ողջույնը։ Հաստատելով ամուր ազգային խաղաղություն, որպես Անդրկովկասում Սովետական իշխանության գրավականը և միասնական ընտանիքով մանելով Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության միասնական ընտանիքի մեջ, մենք հաստատ վստահություն ենք հայտնում, որ Ձեր փորձված ու հմուտ ղեկավարությամբ և Կոմինտերնի դրոշով մենք այստեղ՝ Արևելքի նախադռանը, կհասնենք Սովետական իշխանության հզոր ամրապնդմանը, մեր միասնական տնտեսության վերածննդին։

Կեցցե բոլոր Սովետական ռեսպուբլիկաների միասնական մեծ ընտանիքը։

Կեցցե թանկագին Իլյիչը»[38]։

Սովետական ռեսպուբլիկաների միավորման գաղափարը առաջ էր քաշել Վ. Ի. Լենինը։ Նա տեսականորեն բազմակողմանի մշակել էր և անձամբ ղեկավարում էր ՍՍՌՄ-ի ստեղծման պրակտիկ աշխատանքը՝ ելնելով Մեծ Հոկտեմբերի նվաճումները պաշտպանելու ու ամրապնդելու, Սովետական երկրի սուվերենությունը պահպանելու, տնտեսական քայքայումը լիկվիդացնելու, սոցիալիզմ կառուցելու հոյակապ խնդիրներից։ Հոկտեմբերյան ռևոլյուցիայից անմիջապես հետո, քաղաքացիական պատերազմների ծանր ժամանակաշրջանում, Վ. Ի. Լենինը ընդգծում էր ազգերի կամավոր դաշինք ստեղծելու անհրաժեշտությունը, որը պետք է իրացվեր մեծագույն համբերատարությամբ և դգուշությամբ, հիմնվեր տարբեր ազգերի լիակատար վստահության, եղբայրական միասնության պարզ գիտակցման վրա։ Վ. Ի. Լենինը խստորեն դատապարտում էր այս հարցում ամեն տեսակի շտապողականությունը, վարչարարությունը։ Նա վճռականորեն պայքարում էր ազգային հարցում մեծապետական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի ամեն տեսակի արտահայտությունների դեմ, նշում էր նրանց վտանգավորությունը պրոլետարական ինտերնացիոնալիզմի մեծ գործին։

Այս հարցերի կապակցությամբ պարտիայի Կենտրոնական Կոմիտեին ուղարկած նամակում Վ. Ի. Լենինը ընդգծում էր ցարիզմի կողմից նախկինում ճնշված բոլոր ազգերի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական շահերի նկատմամբ ծայրահեղ բարեկամական վերաբերմունքի անհրաժեշտությունը, Սովետական ռեսպուբլիկանները միավորելիս նրանց լիակատար իրավահավասարության սկզբունքի խստագույն պահպանումը։

[38] Письма трудящихся к В. И. Ленину, стр. 352—353.

1922 թվականի օգոստոսի 10-ին պարտիայի Կենտկոմի Քաղբյուրոն Ի. Վ. Ստալինի նախագահությամբ հատուկ հանձնաժողով էր ստեղծել ՍՍՌՄ կազմելու հարցը նախապատրաստելու համար։ Այդ հանձնաժողովի մշակած թեզիսներում նշվում էր, որ սովետական ռեսպուբլիկաները պետք է միավորվեն «ավտոնոմիայի» սկզբունքով, այսինքն նրանք պետք է մտնեն ՌՍՖՍՌ-ի մեջ ավտոնոմիայի հիմունքով։

1922 թվականի սեպտեմբերին Գորկիում ծանոթանալով ՍՍՌՄ կազմելու մասին պարտիայի Կենտկոմի Քաղբյուրոյի Ի. Վ. Ստալինի նախագահությամբ գործող հատուկ հանձնաժողովի ներկայացրած թեզիսներին, որոնց հիմքում դրված էր «ավտոնոմիզացիայի» սկզբունքը, այսինքն ռեսպուբլիկաների միավորումը նրանց ՌՍՖՍՌ-ի մեջ մտնելու միջոցով, Վ. Ի. Լենինը վճռականորեն առարկում է դրան։ Սեպտեմբերի 27-ին Քաղբյուրոյի անդամներին գրած նամակում նա խիստ քննադատության է ենթարկում այդ կապակցությամբ Ի. Վ. Ստալինի կազմած նախագիծը և առաջարկում է բոլոր սովետական ռեսպուբլիկաների, այդ թվում նաև ՌՍՖՍՌ-ի, միասնական միութենական պետության մեջ լիակատար իրավահավասարության հիման վրա միավորելու սկզբունքը։ «Մենք,—գրում էր Վ. Ի. Լենինը,—մեզ իրավահավասար ենք ճանաչում Ուկրաինական ՍՍՌ-ի և մյուսների հետ և նրանց հետ մեկտեղ ու նրանց հետ հավասարապես մտնում ենք նոր միության, նոր ֆեդերացիայի մեջ...»[39]։

Վ. Ի. Լենինը ամենայն անողոքությամբ հանդես էր գալիս մեծապետական շովինիզմի դեմ։ Այս մասին 1922 թ. հոկտեմբերի 6-ին նա հատուկ դրություն է ուղղում պարտիայի Կենտկոմի Քաղբյուրոյին, որի մեջ նշում էր. «Վելիկոռուսական շովինիզմին հայտարարում եմ ոչ թե կյանքի, այլ մահվան կռիվ։ Հենց որ ազատվեմ անիծյալ ատամից, նրան կուտեմ բոլոր առողջ ատամներով։

Հարկավոր է բացարձակորեն պահանջել, որպեսզի Միութենական Կենտգործկոմում նախագահեն հերթով

ռուս

վրացի և այլն։

Բացարձակորե՛ն»[40]։

Հաշվի առնելով Վ. Ի. Լենինի ցուցումները, Կենտկոմի հանձնաժողովը վերամշակում է ՍՍՌՄ կազմելու մասին բանաձևի նախագիծը, որը հաստատվում է Կենտկոմի 1922 թվականի Հոկտեմբերյան պլենումում։

Պլենումի այդ պատմական որոշման մեջ ասված էր. «Անհրաժեշտ համարել պայմանագրի կնքումը Ուկրաինայի, Բելոռուսիայի, Անդրկովկասյան ռեսպուբլիկանների ֆեդերացիայի և ՌՍՖՍՌ միջև՝ «Սոցիալիստական Սովետական Ռեսպուբլիկանների Միության» մեջ նրանց միավորման մասին՝ նրանցից յուրաքանչյուրին վերապահելով «Միության» կազմից ազատորեն դուրս գալու իրավունքը»։ Դեկտեմբերի 17-ին պարտիայի Կենտկոմի պլենումը Վ. Ի. Լենինի առաջարկով որոշում է՝ կազմել ՍՍՌՄ և ընտրել Կենտգործկոմի չորս նախագահներ՝ այն ժամանակ գոյություն ունեցող միութենական ռեսպուբլիկանների քանակին համապատասխան։

Դեկտեմբերի 24-ին Սովետների համառուսաստանյան X համագու-

[39] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 36, էջ 853։

[40] Նույն տեղում, հ. 33, էջ 439։

մարում Ուկրաինայի, Բելոռուսիայի, Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի և այլ ռեսպուբլիկաների ներկայացուցիչները նշում էին ռուս մեծ ժողովրդի ազատագրական միսիայի մասին, ընդգծում նրա հետ կամավոր կերպով մի բազմազգ ընտանիքում պետականորեն միավորվելու բուռն ցանկությունը։

ՍՍՌՄ կազմելու լենինյան առաջարկության օգտին արտահայտվեցին սովետական բոլոր ազգային ռեսպուբլիկաների աշխատավորները, Սովետների համագումարները։ 1922 թվականի դեկտեմբերի 30-ին Մոսկվայում կայացած ՍՍՌՄ Սովետների I համագումարը հաստատեց Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միություն կազմելու մասին Դեկլարացիան և Միութենական պայմանագիրը, ընտրեց Գերագույն օրենսդիր օրգան՝ ՍՍՌՄ Կենտգործկոմ, որի նախագահ ընտրվեց Մ. Ի. Կալինինը։ Վ. Ի. Լենինն ընտրվում է ՍՍՌՄ Ժողկոմսովետի նախագահ։

Ծանր հիվանդության պատճառով Վ. Ի. Լենինը այս համագումարին չէր մասնակցում, սակայն նրա աշխատանքներն ընթացան Վ. Ի. Լենինի ցուցումներին լիովին համապատասխան։ Սկսելով իր աշխատանքները, համագումարը Վ. Ի. Լենինին ընտրում է պատվավոր նախագահ և բոցավառ ողջույն ուղարկում նրան։

Սովետական իրավահավասար ժողովուրդների կամավոր Միության կազմվելը լենինիզմի գաղափարների, Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության պատմական հաղթանակն էր։ Նրա ոգեշնչողն ու կազմակերպիչը լենինյան պարտիան էր իր առաջնորդ Վ. Ի. Լենինի անմիջական ղեկավարությամբ։

ՍՍՌՄ-ի ստեղծումը համաշխարհային պատմական նշանակություն ուներ։ Ամբողջ աշխարհին ցույց էր տրվում, որ «Պրոլետարիատը սովետական հասարակարգի մեջ գտավ ազգային հարցի ճիշտ լուծման բանալին, նա այդ հասարակարգի մեջ հայտնագործեց ազգային իրավահավասարության և կամավորական հիմունքներով կայուն բազմազգ պետություն կազմակերպելու ուղին»[41]։

Մինչև իր կյանքի վերջին օրերը Վ. Ի. Լենինը խորապես մտահոգված էր ազգային ճիշտ քաղաքականությունն իրականացնելու, ՍՍՌՄ-ն ամրապնդելու, ժողովուրդների բարեկամության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքների հետևողական պահպանման հարցերով։ Նրան խիստ անհանգստացնում էին վելիկոռուսական շովինիզմի, ինչպես նաև տեղական նացիոնալիզմի արտահայտությունները որոշ ընկերների մոտ, ազգային հարցում եղած թերությունները։

Նա ուշադրությամբ հետևում էր սովետական ռեսպուբլիկաների զարգացմանը, ուրախանում էր նրանց հաջողություններով, ընդունում ռեսպուբլիկաների ներկայացուցիչներին, զրուցում նրանց հետ, ողջույններ էր ուղարկում Անդրկովկասի աշխատավորությանը, ցուցումներ տալիս՝ ծայրահեղ հոգատարություն ցուցաբերել նախկինում ճնշված ժողովուրդների շահերի նկատմամբ։

1922 թ. ապրիլի վերջին Վ. Ի. Լենինը հեռագիր է ուղարկում Բաքու՝ Ազնեթի բանվորներին և ինժեներներին, շնորհակալություն հայտնելով նրանց Սուրախանի նավթահանքերում հրդեհը մեկուսացնելու գործում

[41] ՍՄԿՊ-ն... բանաձևերում, մաս 1, էջ 910։

ցուցաբերած հերոսության համար։ Հոկտեմբերի սկզբին հաշվետվություն լսելով Ազնեթի վիճակի մասին, Վ. Ի. Լենինը Բաքվի բանվորներին գրում էր. «Թանկագին ընկերներ։ Հենց նոր ես լսեցի ընկ. Սերեբրովսկու կարճ հաշվետվությունն Ազնեթի գրության մասին։ Այդ գրության մեջ դժվարությունները շատ քիչ չեն։ Հղելով ձեզ իմ ջերմագին ողջույնը, խնդրում եմ մերձավոր ժամանակում ամեն կերպ դիմանալ։ Մեզ համար առանձնապես ծանր է սկզբում։ Հետո ավելի կհեշտանա։ Մենք հաղթանակի պետք է հասնենք և կհասնենք, ինչ էլ որ լինի։

Մի անգամ ես հղում եմ ձեզ կոմունիստական լավագույն ողջույններ»[42]։

Ընդունելով Ադրբեջանի Կենտգործկոմի նախագահ, հին պարտիական Ս. Ա. Ադամալիօղլուն, Վ. Ի. Լենինը մանրամասն հետաքրքրվում է Անդրկովկասի վիճակով, բազմաթիվ հարցեր է տալիս Անդրկովկասյան Միութենական Սովետի աշխատանքի, երկրամասի կառավարման, ադրբեջանական բանակի քանակի վերաբերյալ. հետաքրքրվում է Սովետական Հայաստանով։ Ուշադիր լսելով Ս. Ադամալիօղլու պատասխանները Ադրբեջանում իրականացվող սոցիալիստական միջոցառումների մասին, Վ. Ի. Լենինը հարցնում է. «Իսկ ինչպես են այդ բոլորին վերաբերվում ադրբեջանական բանվորներն ու գյուղացիները»։ Իր հիշողություններում պատմելով մեծ առաջնորդի հետ ունեցած իր այս անմոռանալի հանդիպման մասին, Ս. Ադամալիօղլին ասում է. «Ես վերակենդանացել էի, ոգևշնչվել։ Անհրաժեշտ է տասնապատկել աշխատանքը»։

1922 թվականի դեկտեմբերին Վ. Ի. Լենինի հետ Գորկիում հանդիպում է ունենում Ա. Մյասնիկյանը։ Այդ ժամանակ Վ. Ի. Լենինի առողջության վիճակը բարելավվել էր, նա պատրաստվում էր վերադառնալ Մոսկվա, աշխատանքի։ «Ուրախ էր։ Ծիծաղում էր,— հիշում է Ա. Մյասնիկյանը Վ. Ի. Լենինի մասին։— Բանդատվում էր միայն այն բանից, որ բժիշկները չարչարում էին իրեն, նրա ստամոքսը լցնում էին դեղերով ու փչացրել էին այն. ասում էր, թե այժմ իրեն լավ է զգում և հույս ունի առաջվա պես աշխատելու»։ Վ. Ի. Լենինը բազմաթիվ հարցեր է տալիս Ա. Մյասնիկյանին, հետաքրքրվում է շատ բաներով և մասնավորապես Անդրկովկասի վիճակով։ «Շատ հարցեր էր տալիս,— պատմում է Ա. Մյասնիկյանը,—ըստ սովորության՝ աշխույժ կերպով հետաքրքրվում էր ամեն բանով, խոսում էր անդրկովկասյան գործերի մասին։ Հարցնում էր, թե արդյոք ոտքի կանգնել է ավերված Հայաստանը, ինչ դրության մեջ է այնտեղ բամբակը, ոռոգումը, պարենամթերքը, բավականաչափ ամուր է արդյոք ազգային Կարմիր Բանակը, չեն նեղացնում արդյոք «մանր մարդկանց», ագիտացիա չի՞ մղվում արդյոք բուրժուական ինտելիգենցիայի կողմից, չե՞ն խոսում արդյոք «ռուսական սվիններին» մասին և այլն։ Ես հեռացա նրանից այն տպավորության տակ, թե Անդրկովկասյան ֆեդերացիան և այն ժամանակ ընկեր Լենինի գաղափարով ծրագրվող Սովետական Ռեսպուբլիկաների Միությունն ավելի ևս կամրապնդեն ազգամիջյան բարեկամությունը և կուժեղացնեն Սովետական իշխանությունը»[43]։

---

[42] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 440։

[43] Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին, հ. 2, էջ 191—192։

1922 թվականի վերջին և 1923 թվականին ծանր հիվանդության պայմաններում Վ. Ի. Լենինը կարևորագույն դիրեկտիվներ է տալիս պարտիային, թելադրում է մի շարք նամակներ և հոդվածներ («Էջեր օրագրից», «Կոոպերացիայի մասին», «Ինչպես վերակազմենք Բանգյուղտեսչությունը», «Մեր ռևոլյուցիայի մասին», «Լավ է քիչ, բայց լավ», «Նամակ համագումարին», «Օրենսդրական ֆունկցիաները Պետպլանին հանձնելու մասին», «Ազգությունների կամ «ավտոնոմիզացիայի» հարցի շուրջը»), որոնց մեջ խորապես հիմնավորում և զարգացնում է ՍՍՌՄ-ում սոցիալիզմի կառուցման իր պլանը, կոնկրետ ցուցումներ է տալիս սոցիալիստական շինարարության կարևորագույն հարցերի մասին:

Վ. Ի. Լենինի այս վերջին աշխատություններում, որոնք նրա յուրահատուկ քաղաքական կտակն էին պարտիային, մեծ առաջնորդը ընդգծում էր, որ Սովետական երկրում կա այն բոլորը, ինչ անհրաժեշտ է լիակատար սոցիալիստական հասարակարգ կառուցելու համար: Նա խորապես համոզված էր, որ ամբողջ աշխարհում սոցիալիզմի հաղթանակն ապահովված է: «Պայքարի ելքը, վերջին հաշվով կախված է նրանից,— գրում էր Վ. Ի. Լենինը «Լավ է քիչ, բայց լավ» հոդվածում,— որ Ռուսաստանը, Հնդկաստանը, Չինաստանը և այլն կազմում են բնակչության հսկայական մեծամասնությունը: Իսկ բնակչության հենց այդ մեծամասնությունն է, որ վերջին տարիների ընթացքում արտասովոր արագությամբ ներգրավվում է իր ազատագրման պայքարի մեջ, այնպես որ այդ իմաստով կասկածի նշույլ անգամ չի կարող լինել, թե ինչպիսի վերջնական լուծում կունենա համաշխարհային պայքարը: Այդ իմաստով սոցիալիզմի վերջնական հաղթանակն ապահովված է միանգամայն և անպայմանորեն»[44]:

Մեծ նշանակություն տալով Կոմունիստական պարտիայի ազգային քաղաքականության հետևողական և ճիշտ իրականացմանը, Վ. Ի. Լենինը «Ազգությունների կամ «ավտոնոմիզացիայի» հարցի շուրջը» նամակում, որը նա թելադրել էր 1922 թ. դեկտեմբերի 30-ին և 31-ին, պահանջում էր խստորեն պահպանել պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքները, ապահովել ազգությունների լիակատար, իրական իրավահավասարությունը, մեծագույն ուշադրությամբ վերաբերվել տարբեր ազգությունների շահերին, առանձնահատկություններին, ամրապնդել յուրաքանչյուր ռեսպուբլիկայի ինքնուրույնությունը Սովետական երկրի մեծ ընտանիքում:

Անդրկովկասյան ֆեդերացիայի ստեղծման հարցի կապակցությամբ լուրջ կոնֆլիկտ էր առաջացել Վրաստանի Կոմպարտիայի Կենտկոմում: Նրա անդամներից մի քանիսը՝ Մդիվանին, Մախարաձեն, Օկուջավան և ուրիշներ դեմ էին Անդրֆեդերացիայի ստեղծմանը: Այս հարցերի քննարկման համար պարտիայի Կենտկոմի քարտուղարությունը 1922 թ. նոյեմբերի վերջին ստեղծում է հատուկ հանձնաժողով, որը Թիֆլիսում աշխատելուց հետո, քննարկման արդյունքների մասին զեկուցում է Վ. Ի. Լենինին: Ծանոթանալով նյութերին, Վ. Ի. Լենինը դժգոհ է մնում հանձնաժողովի աշխատանքից, որն անհրաժեշտ աչալրջություն և համբերատար վերաբերմունք ցույց չէր տվել «վրացական միջադեպը» քննելիս: Մեծ կարևորություն տալով այս հարցին

[44] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 397:

«Ազգությունների կամ «ավտոնոմիզացիայի» հարցի շուրջը» նամակում Վ. Ի. Լենինը վճռականորեն դատապարտում էր մեծապետական թեքումը ազգային հարցում, որպես այն պայմաններում գլխավոր վտանգի։ «... Ոչ մի բան այնպես չի կասեցնում պրոլետարական դասակարգային համերաշխության զարգացումն ու ամրապնդումը — գրում էր Վ. Ի. Լենինը,— ինչպես ազգային անարդարությունը, և «վիրավորված» նացիոնալները ոչ մի բանի նկատմամբ այնպես զգայուն չեն, ինչպես հավասարության զգացմունքի և այդ հավասարության խախտման նկատմամբ, իր ընկեր պրոլետարների կողմից թեկուզ նույնիսկ անփութորեն, թեկուզ նույնիսկ կատակի ձևով այդ հավասարությունը խախտելու նկատմամբ»[45]։

Վ. Ի. Լենինը պահանջում էր ծայրահեղ զգույշ, համբերատար, մեղմ, զիջող լինել նախկինում ճնշված փոքր ազգերի, ժողովուրդների նկատմամբ, որոնք պատմական անցյալում հալածվել են, վիրավորանքների, բռնությունների ենթարկվել «մեծապետական» ազգի կառավարության, ցարիզմի կողմից։

Վ. Ի. Լենինը նշում էր, որ պրոլետարական ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների բարեկամության քաղաքականության խեղաթյուրումը կարող է խախտել Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության հեղինակությունը։ Ճնշված ժողովուրդների նկատմամբ, թեկուզ և նույնիսկ մանրուքներում,— ասում էր Վ. Ի. Լենինը,— իմպերիալիստական վերաբերմունք ցուցաբերելով մենք խախտում ենք «մեր ամբողջ սկզբունքային անկեղծությունը, իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի մեր ամբողջ սկզբունքային պաշտպանությունը»[46]։

Վ. Ի. Լենինը բոլոր կոմունիստներին, աշխատավորությանը դաստիարակում էր պրոլետարական ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության ոգով, կոչ էր անում անողոք պայքար մղել մեծապետական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի բոլոր տեսակի արտահայտությունների դեմ, ամրապնդել բարեկամական դաշինքը ռուս ժողովրդի և բազմազգ սոցիալիստական հայրենիքի մյուս բոլոր ժողովուրդների միջև։

Սրբությամբ կատարելով Վ. Ի. Լենինի ցուցումները, հետևողականորեն իրականացնելով Անդրկովկասյան ֆեդերացիայի ստեղծման լենինյան գաղափարը, կամավոր կերպով մտնելով ՍՍՌՄ ժողովուրդների միասնական ու անխախտ, եղբայրական ընտանիքի մեջ, Անդրկովկասի աշխատավորները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, իրենց սիրելի առաջնորդ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ արագորեն վերականգնում են իրենց ռեսպուբլիկաների ժողովրդական տնտեսությունը, զարգացնում ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան, ցույց են տալիս ազգային համերաշխության հիանալի օրինակ։

[45] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 36, էջ 704։
[46] Նույն տեղում, էջ 707։